ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Ավետիսյանի՝ 2017 թ. սեպտեմբերի 14-16-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Գործուղվողը՝

Սերգեյ Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Համբուրգ, 2017 թ. սեպտեմբերի 14-16-ը

***4.* Հրավիրող կողմը՝**

Ռոնալդ Շուլց, «Լյուֆթհանզա Գրուպ» ընկերության Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հարցերով գլխավոր տնօրեն

5. Գործուղման նպատակը՝

«Լյուֆթհանզա Տեխնիքս» ընկերության կողմից ՀՀ-ում օդանավերի օպերատիվ և պարբերական տեխնիկական սպասարկման կայանի ստեղծման հնարավորությունների քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը՝

Գլխավոր վարչության պետ Սերգեյ Ավետիսյանը հանդիպեց «Լյուֆթհանզա Գրուպ» ընկերության Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հարցերով գլխավոր տնօրեն՝ Ռոնալդ Շուլցի հետ, որի առաջարկով տեղի ունեցավ այցելություն ընկերության Համբուրգում տեղակայված արտադրամասերը, որտեղ ներկայացվեցին իրականացվող աշխատանքները, պատասխաններ տրվեցին հայկական կողմի մի շարք մասնագիտական հարցերին: Այնուհետև տեղի ունեցավ ընդլայնված հանդիպում «Լյուֆթհանզա Տեխնիքս» ընկերության Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հարցերով փոխնախագահ՝ Դմիտրի Զայցևի մասնակցությամբ, որի ընթացքում հայկական կողմը ներկայացրեց ՀՀ քաղաքացիական ավիացիայում ներկա դրական դինամիկան և գերմանական ընկերության հետ համագործակցության հեռանկարները՝ հաշվի առնելով օդային փոխադրումների ծավալների զգալի աճը, Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետ կապված բարեփոխումները և տարածաշրջանում «Լյուֆթհանզա Տեխնիքս» ընկերության հետ համեմատելի այլ խոշոր տեխնիկական սպասարկման կազմակերպությունների բացակայությունը: Դմիտրի Զայցևը իր հերթին ներկայացրեց «Լյուֆթհանզա Տեխնիքս» ընկերության կողմից իրականացվող գործունեությունը՝ այդ թվում նաև ընկերության օտարերկրյա պետություններում գտնվող արտադրական հզորությունները:

Քննարկվեցին նշված ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում գործունեության ծավալման հնարավորությունների վերաբերյալ մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակելու համագործակցությունը «Լյուֆթհանզա Տեխնիքս» ընկերության և Գլխավոր վարչության միջև: Սերգեյ Ավետիսյանը հայտնեց գերմանական կողմին ցանկացած անհրաժեշտ աջակցության տրամադրման Գլխավոր վարչության պատրաստակամության մասին: